

կը մեկնի Եւրոպա, հրատարակչական մեծ ծրագրով մը: Իր գործին աջակիցներ գըտնելու նպատակաւ, կ'որոշէ նախ Խաւրիա հանդիպիլ: Լիվոնոյ հասնելով, հոն կը գտնէ իր Աւետիս եղբայրը, որ Հայրենիք կը վերագառնար: Ոսկան վարդապետ՝ Լիվոնոյի հայ վաճառականներէն չի գտներ յուսացած օգնութիւնը, հակառակ Յակոբ կաթողիկոսին յանձնարարական գրութեան (4): Եւ կ'երթայ Հոմ, ուր Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին կը ներկայացուի երկու յանձնարարականներով:

Առաջինը կը կրէ 17 Դեկտեմբեր 1663 թուականը: Հեղինակը՝ որուն անունը չէ նշանակուած, Ոսկանի աշակերտակից մըն է: Անստորագիր այս գրութիւնը կը թարգմանենք իտալական բնագրէն.

«Գերպծ. Ոսկան՝ Մեծ Հայքի Երեւան քաղաքէն, կաթողիկէ եղաւ Գերպծ. Բիրոմալլիի առջև, անոր 1634ի առաքելութեան ժամանակ: Հազիւ թէ իբրև կաթողիկէ ճանչցուեցաւ, վտարուեցաւ (Էջմիածնէ) և թափառեցաւ հեռաւոր երկիրներ: Յետոյ միևնոյն Գերպ. Բիրոմալլիի խընդրանքին վրայ, Հայրենիք վերագործու: Յաջորդ տարին ծայր տուն աւելի մեծ հալածանքներ. բանտարկութիւն, անօթութիւն, ծարաւ և ամէն տեսակ ուրիշ

(4) ԼԵՈ, ԱՆՊ, 445, 447—448. Չամչեան, Գ. 659: